ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Ղազոյան

«31» օգոստոսի 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

_Լոռի_________________ք. Վանաձոր

Մարզ համայնք

__Վ.Համբարձումյանի անվան 25 հիմնական դպրոց 4 րդ-գ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Դաղբաշյան Գրետա Վոլոդյայի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) _Դասարանում կա 28 աշակերտ որից 10 աղջիկ, 18 տղա: Դասարանի բոլոր աշակերտները խելացի են , ընկերասեր, նրանք բոլորն էլ առաջնորդվում են՝ ,,Բոլորը մեկի,մեկը բոլորի..՛/ նշանաբանով: _Աշակերտները ապահոված են դասագր քերով և գրենական պիտույքներով: Կարճ ժամանակում նրանց ուժերով ստեղծվել է կանաչ անկյուն.՛___Դասարանում ընտրվել է__ դասարանի ակտիվ. Ավագ և օգնականներ, ընտրվել են սանիտարներ, նռանք բոլորն էլ քաջ գիտակցում են իրենց անելիքները: _Դասարանի աշակերտները դպրոց են հաճախում պահպանելով համավարակից պաշտպանվելու բոլոր կանոնները:Դասարանում ունենք հատուկ կանոնադրություն:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
_Դասարանի ղեկավարի և ծնող խորհրդի շնորհիվ ապահովվում է աշակերտների կանոնավոր հաճախումները:__Ամենօրյա հսկողության տակ է պահվում անհարկի բացակայության հարցը;Կամակերպվում է հստակ մոտեցումներ ուսման մեջ ետ մնացող աշկերտների հետ;Ուսումնական պրոցեսը այնպես կազմակերպել, որ ոչ մի երեխա դուրս չմնա ուշադրությունից ,դառնան գրագետ , ու խելացի:Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել խոսքի և վարքի կուլտուրայի պահպանումը:Դասղեկի ժամերին ծանոթացնել ճանապարհային երթևեկության կանոններին:Անցկացնել զրույցներ, թե ինչպես պետք է պահեն տանը, դրսում և հասարակական վայրում

## 1. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Հոգևոր դաստիարակություն Դասղեկի ժամեն աշակերտներին դաստիարակել ազգային ոգով , անցկացնել զրույցներ հայ ժողովրդի հերոսական,պատմական անցյալի,քրիստոնեության ընդունման, նրա ծեսերին և սովորույթներին:Տալ հոգևոր և հայեցի ճիշտ դաստիարակություն.անցկացնել երկխոսություններ..՝,,Ուր են տանում աղանդները՛..Դասղեկի ժամերին ծանոթացնել հոգևոր և մշակույթային__կյանքում տեղի ունեցող___փոփոխություններին;Ծանոթացնել հայ ազգային եկեղեցիական տոներին_ :

1.2

1.3 Գեղագիտական դաստիարակություն _ Աշակերտների գե ղգիտական դաստիարակության մակարդակը բարձրացնելու համար օգտվել ժամանակակից տեխ. միջոցներից __, մտնել օնլայն հարթակներ-դիտել տարբեր թանգարաններ,թատրոններ, համերգասրահներ:Դասարանում ստեղծել՝ հմուտ ձեռքեր՛__-անկյունը, գեղեցիկ վահանակներ:_Ուսուցչի օրվան նվիրված____պաստառի պատրաստում.«Շնորհավոր տոնդ ուսուցիչ» խորագրով: Կազմակերպել___այց Ստեփան Զորյանի տուն թանգարան:Կազմակերպել Ամանորյա հանդես_: Կազմակերպել միջդասարանական ընթերցանության մրցույթ,միջդասարանական սպորտլանդիաներ:_Անցկացնել պոեզիայի__համաշխարհային օր;__ __Հեքիաթների բեմականացում

1.4 Ռազմահայրենասիրական դաստիարակություն __Ծանոթացնել հայոց բանակի ստեղծման պատմությանը,փառքով պսակված քաջարի հերոսների սխրանքներին:Ծանոթացնել զինանշանին, դրոշին և օրհներգին:Ստեղծել փառքի անկյուն:__Զրույց.«Հպարտ եմ որ հայ եմ»:Անցկացնել ազգագրական երգի տոն:Անցկացնել միջոցառումներ Հայոց բանակի, Անկախության օրվան նվիրված: __Զրույց «Հայրենիքս ապահով ձեռքերում է» թեմայով

1.5 Ֆիզիկական դաստիարակություն ___Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել աշակերտների ճիշտ նստելը կեցվածքի պահպանման համար:Ամեն առավոտ և դասամիջոցներին__կատարել լիցքային վարժություններ:Դասամիջոցների ընթացքում զարգացնել աշակերտների մոտորիկան:Որի համար կազմակերպել և անցկացնել մատերի խաղեր սեղանի վրա:_ Անցկացնել միջդասարանական սպորտլանդիաներ; Անցկացնել շախմատի մրցումներ

1.6 Աշխատանքային դաստիարակություն __Զարգացնել աշակերտների մատների մոտորիկան, բնական և արհեստական նյութերով պատրաստել հավաքածուներ:_Սովորեցնել աշխատանքային գործիքներով_ճիշտ և անվտանգ աշխատել: Սիրել աշխատավոր մարդու աշխատանքը:Կազմակերպել հանրօգուտ աշխատանք դպրոցի բակում: Անցկացնել զրույց ինչ են ուզում դառնալ և ում են ուզում նմանվել:_Թափոնը դարձնենք «զենք»:__Անցկացնել մրցույթ .«Ամենաեղեցիկը իմ դասարանն է»: Կազմակերպել սանիտարական օր. Գրքերը ,նստարանները վերանորոգելու համար:__Մայիսի մեկը համաշխարհային աշխատավորների միջազգային օր

1.7 Բնապահպանական դաստիարակություն _Դպրոցամերձ այգում կատարել ծառատնկում,սովորեցնել մշակել տնկած ծառերն ու տնկիները, __սիրել բնությունը:Հաճախակի այցելել զբոսայգիներ որտեղ էլ դաստիարակել բնության _պահպանության կանոնների մասին:Դասարանում ստեղծել կանաչ անկյունԶրույց մարդը բնության պսակն է թեմայով:Օգնել մեր թևավոր բարեկամներին: _Պաշտպանել բնությունը նշանակում է պաշտպանել հայրենիքը;_Թափոնը վեր ածել զենքի

**1.8** Դպրոց ըՆՏԱՆԻՔ ԿԱՊ Ը __Ծնող խորհրդի հետ հաճախակի կատարել այցելություն բացակայող աշակերտների տները_:Ծանոթանալ և_ օգնել սոցիալապես_անապահով ընտանիքներին:Ամրապնդել դպրոց___-ընտանիք փոխադարձ կապը_:__Անցկացնել զրույցներ .Հայրը և մայրը երեխայի դաստիարակության օրինակ:Զրույցներ վարքի կուլտուրայի մասին:_Զրույց .《Իմ տանը դեռահաս է ապրում

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթները | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | ,,Դասարանի կահավորում,ակտիվի ընտրություն,ստեղծել օրվա ռեժիմ,հերթապահություն; | | դասվար |
| II | Զրույց հպարտ եմ որ հայ եմ: Զրույց նվիրված անկախության օրվան; | | դասվար |
| III | Ճանապարհային երթևեկություն. Փողոցներում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոնները; | | դասվար |
| IV | Աամունքի ժամ՝ նվիրված ուսուցչի օրվան;Հովհաննես Թումանյան 155; | | դասվար |
| V | Մեծ Լոռեցին և նրա ստեղծագործությունները․–Ընթերցանության շաբաթ | | դասվար |
| VI | ,,Ոսկե աշուն՝ դպրոցամերձ այգում տերևաթափի դիտում. | | դասվար |
| VII | Ճանապարհային երթևեկություն .«Հետիոտների տեղաշարժը փողոցներով և ճանապարհներով; | | դասվար |
| VIII | Վարվեցողության կանոններ.,,Հրաժեշտ, ողջույն,դպրոցում պահելաձև.՝ | | դասվար |
| IX | Զրուց.՝ ,,Գիրքը մեր բարեկամն է՝ | | դասվար |
| X | Զրույց՝ ,,Ինչպես օգնել ձմեռող թռչուններին.. | | դասվար |
| XI | Զրույց ,, Ինչպես պաշտպանվել աղետներից.. | | դասվար |
| XII | Ճանապարհային երթևեկություն – Փողոցների և ճանապարհի տարրերը;Ճանապարհային գծանշումը | | դասվար |
| XIII | Ամանորի ցերեկույթ | | դասվար |
| XIV | Ծանոթացնել աշակերտի իրավունքներին և պարտականություններին; | | դասվար |
| XV | Զրույց. Ծանոթացնել հայոց բանակի կազմավորման պատմությանը;Ունկնդրել հայրենասիրական երգեր: | | դասվար |
| XVI | Ծանոթացնել ազգային խորհրդանշաններին,(դրոշ,զինանշան,օրհներգ ; | | դասվար |
| XVII | Ճանապարհային երթևեկության կանոններ․ Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները; | | դասվար |
| XVIII | Զրույց. Առաքելական եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում: | | դասվար |
| XIX | Գիրք նվիրելու օր | | դասվար |
| XX | Քաղաքացիական պաշտպանություն.Աղետները և նրանից պաշտպանվելու ձևերը։ | | դասվար.ծնող խորհուրդ |

| | | | |
|---|---|---|---|
| XXI | Ցերեկույթ  նվիրված մայրության օրվան | | դասվար |
| XXII | Ճանապարհային երթևեկության կանոններ՝ ,,Փողոցն անցնելու կանոնները..՝՝ | | դասվար |
| XXIII | Քաղպաշտպանություն : | | դասվար |
| XXIV | Զրույց .՝ ,,Հաղթանակների ամիս ..՝ թեմայով | | դասվար |
| XXV | Ճանապարհային երթևեկության կանոններ . Խաչմերուկները և դրանց տեսակները | | դասվար |
| XXVI | Աամունքի օր,Ծաղիկների աշխարհում | | դասվար |
| XXVII | Զրույցի միջոցով ծանոթացնել Հայոց պետականությանհիմնադրման օրվան | | դասվար |
| XXVIII | Զրույց .  《Ես մի զարկն եմ քո բազկի » | | Դասվար, ծնող խորհուրդ |
| XXIX | Ճանապարհային երթևեկություն.հանրագումարային պարապմունք | | դասվար |
| XXX | Միասնական թատրոնի դիտում | | դասվար |
| XXXI | Ճանապարհային երթևեկություն .《《Ուղևորների պարտականությունները» | | դասվար |
| XXXII | Վարքը հասարակական վայրերում | | դասվար |
| XXXIII | ««  Եթե ես լինեի . . .》》 թեմայով  բանավեճ | | դասվար |
| XXXIV | Էքսկուրսիա /Գառնի Գեղարդ / | | ծնող խորհուրդ |